

գրքին մէջ (Չ, 7), յունարէն Գիողնիստոն թարգմանուած է Սպանդարամետ. Հագարը՝ այդ անուան մէջ կը գտնէ զրադաշտական Սպանդա Արամայիտն: Բնաւ տեղեկութիւն յունինք թէ Հայաստանի մէջ ինչ կերպով եւ ո՞ր կը պատուուէր այս աստուածն. չի պատկանիր նա պաշտամուտ պաշտուած աստուածներու կարգին, որոնք՝ քրիստոնէութեան յաղթանակին միջոց՝ տեղութեան իշխանութեամբ եւ ուժով ջնջուեցան: Թերեւս նա տեղական պաշտաման մի կեդրոնը կը կազմէր: Կը կարդանք թոյմայ Արծրունւոյ մէջ (հրատ. Ի Պետրբուրգ, 1887, էջ 28). «Եւ երկիր պանդոկի Սպանդարամետ աստուծոյ է, ոչ ստեղծեալ յուսեցէ, այլ որպէս երեւի՞ց՝ նոյնպէս էր». սակայն Հեփթաղաց Մանթիթոպ թագաւորին կրօնական դաւանութեան մասը կը կազմէ այս, որ կը ներկայանայ իբր գլուխ զրադաշտական շարժման մի, եւ որ բնաւ ո՞ եւ է կապ չունի Հայաստանի հետ:

Շարայարեյի

ԱՌ ԽՐԱՍԿՐԱՊԵՏ ԲԱԶՄԱԿԷՊ ՀԱՆԴԻՍԻ

Թ Ո Ղ Չ Բ Ա Ր Ծ Վ Ա Մ Ի



Տ Ա Ր Ա Յ մեզի նկատմամբ ըսածներն՝ շատ անգամ մեզ եւ օգտակար են. վասն զի անոնց մէջ կայ գոլիստ՝ որ ամբարտաւանութիւն կամ արիւթիւն կը բերէ, եւ կայ պարսաւ՝ որ թէ եւ ի զայրոյթ կը շարժէ՝ բայց մտածել եւ կու տայ, եւ այս շատ աւելի օգտակար է. միայն թէ խընկերու ալեաց միջէն անցնելու ժամանակ՝ պէտք է զմեզ խոհեմ ցոյցնենք, եւ արիւստիքս՝ խարազանաց ներքեւ: Այն օգուտներու

թուէն, որք ըստ իս յառաջ կու գան այդ համագայի զուգարութիւններէն, յաճախ մեծամեծներէն մին է՝ կարեաւ ծծածաղիլ կամ ժպտիլ, յաւելուլ թել մի կենաց հիւսածին վերայ:

Աշխարհարարութեան մէջ այլ կարող են օտարք մեզի բան սորվեցընել. եւ այն հին կենաց մնացորդն, որ գուցէ ժայռի մի մէջ պահուած է, եւ կամ ուժգնահոս ջրոյ մի առաջին ցայտում՝ կարող են յաջող գտիչ եւ պատմիչ մ՝ունենալ, որ մեր ազգէն չըլինի: Բայց արեօք օտարոտի չ՞ որ պատմիչ յանկարծ ի մարգարէ փոխուի, եւ մինչդեռ կարգաւ ըստ երկրաց զիւզակները կը նկարագրէ, սկի պատմել մեզ անուններ եւ դէպքեր՝ նա եւ այնպիսիներուն, որք բնաւ եղած չեն, բայց գուցէ օր մի կարենան զուլթիւն ունենալ յիշեալ տեղեաց մէջ, մարդկանց անհանդարտ կամեցողութեանց թելադրութեամբ անկուելով կամ հաստատուելով:

Գեղեցիկ թերթ մի լոյս կը տեսնէ ի Գերմանիա, որ ամէն ամիս ընթերցողաց աչքերը եւ ուղեղները կը զուարճանքնէ, որ՝ եթէ ուզուի՝ կարել է մեզ եւ նոյն նպատակին ծառայել, եւ զոր կը յանձնեմ Բագմալիպի խրմբագրողաց մտադրութեան. բայց անոր՝ որ արուեստից պատմութիւնը կը սիրէ՝ կ'ուզեմ նոյն իսկ ըսել, թէ անտի չօգտուիչն յանցանք մ'է: — Այս օրագիրս, որ ստուգիւ կրնայ օգտակար լինել ընտանեաց համար, ունենալով իւր մէջ առողջ կերակուր, պատուաբեր թէ՛ խոհարարին եւ թէ բազմականաց, կը կոչուի Ամսարեթք (Monatshefte), զոր ի լոյս կ'ընծայէ տունն վաւհազէն եւ իշտանց պարունայց: Բայց նոյն իսկ ընտիր ճաշի մի մէջ, կարելի է մի տեսակ կերակրոյ մէջ հաս մի պզպեղ գանուի՝ որ պէտք չէր լինէր, եւ ուրիշ տեսակի մի մէջ՝ պակսին ադի երկու հատիկը. եւ գուցէ մեր խնդիրն այլ ասոր մէջ է:

Կ'ընթեռնու՞մ (յիշեալ թերթին) ապրիլի պրակին մէջ (յէջս 218-225), ուր կը պատմէ պր. Եղմինց Ալադին իւր զլիւնն պատահածները՝ Հայաստանի մէջ շրջած ժամանակ: Եւ ժամանակը չբոշեք, բայց զմեզ կ'սպարտոյցնէ թէ ինքն շատ անգամ յեր-

1. Հմմտ. Ges. Abh. S. 264, 265; armen. Stud. S. 139.

կար տեսած է շրջած է այդ աշխարհը, և կենդանի բառերով կը գծագրէ և կը գունագեղէ զայն իբր ճարտար նկարիչ մի։ Անտարակոյս ոչ ոք պիտի հաստատէ՝ թէ՛ ինքն թուրք բանակաց միոյն մէջ բժիշկ լինելով՝ Հայոց վրայ սաստիկ սէր ձգած լինի։ Բայց որովհետև քրիստոնեայ էր, քափազելի էր որ այն կողմերու քրիստոնեաց ևս՝ աւելի սիրով հիւրընկալէին զինքը։ — Բաբելոնի էր՝ որ արևելեան ուղղափառութիւնն զիջանէր արևմտեանին, թէ և սա գունազոյն լինի, վասն զի չեմ գիտեր թէ ինչ գոյն ունի մեր յօղուածագրին քրիստոնութիւնն։ Այս ստոյգ է, որ Ալադին՝ ընդդէմ օսկաւ հիւրասիրութեան Հայոց աներուն՝ կը գործածէ կրակի բառեր, ձախող դատողութիւններ և մինչև անգամ վիրաւորանք, զորս մենք հեռաւորներս, որ ծոյլ ճանաչաբարոզներ ենք լոկ քրոջ էջերուն մէջ, պիտի շյալողինք ուղղել և ոչ ողբացընել, որք սակայն ուրիշ շատագոյութեան մի կարօտ են։ Արդ եթէ առատաձեռնութիւնն առ օտարս, պատիւ առ աղքատս և թշուառս՝ գոյլուած են նա և ի Հայս, աւելի քան ինչ որ այն զիւրագրիւն գերմանացին կը կարծէ, այս բանս յուսամ ըստ ինքեան պիտեան մի կը յարուցանէ կամ յազգայնոց, և կամ օտար՝ բայց աւելի նուազ գործող և նուազ խտացատ՝ ճանաչաբարոզ միջինն։

Բայց մենք հետևինք իշխմանց Ալադինին ընթացից։ Նա երազ կ'ընթանայ՝ իջնելով Երզրնականէն դէպ ի Բալու, և անտի՛ միշտ ի հարաւակողմն երթալով՝ Եփրատայ հովտին երկայնութեամբ, դէպ ի Խարբերդի արգաւանդ գաշտալայրը կը դիմէ։ Այս ճանապարհին վրայ նա շնչասպառ և պարտասած՝ հայ զիւղակի մի կը հանդիպի, և յետ վեց ժամ ևս ճանապարհորդելու՝ դարձեալ մի ուրիշ աւանի կը պատահի, և բոլոր ասոնց բնակիչք մեր ճանաչաբարոյիս հետ միայն թուրքերէն կը խօսէին։ Սոյն ուղեգրութեանս մէջ ընած յիշուած չէ, բայց ես կը համարեմ՝ զիտնալ՝ զոր և ձեզ հազարդելու պէտք չի կայ՝ թէ այն կողմերն այլ հայ լեզուներ ամենակեղանի է, թէպէտ և տէրանց լեզուի գործածութիւնն բնականապէս ընդ-

հանուր և սովորական դարձեր է ամենուն ևս։ Բայց հիմայ իմ նպատակս է Ձեր և ընթերցողաց ուշադրութիւնը դարձնել այն երկու անուանց վերայ, զոր ունենալ կը կարծուին՝ ըստ նոր աշխարհագրիս՝ յիշեալ երկու հայ զիւղակիներն։ Դուք այժմէն իսկ կարող էք, Բարեկամ, ծանուցանել ձեր ընթերցողաց՝ աւելի հեղինակութեամբ քան ինչ որ ես ունիմ, թէ ազգային զոց և աշխարհացոյց քարտիսաց վերայ անոնց հետքն անգամ չի տեսնուիր, այնու հանդերձ որ Ս. Ղազարու մէջ եղած են և կան հմուտ վարժապետք, որք կարող են ստորագրել ինչ որ եղած է և է այժմ՝ Հայաստան։ Բայց և յամենայն դէպս՝ պիտի հարցունի, թէ այդ թուրք անուան կից ուրիշ անուն մ'այլ չի կայ արդեօք. և մի թէ կասկած չի՞ ծնանիր այդու հարցընելու, որ թէպէտ և բերնէ յականջ կը պտըտին այդ բառերը, արդեօք փաղաքշական ծաղրանուն մը չեն, և զուցէ այն տեսակներէն, զորս կը հնարեն ըստ քմաց զոգձօ ճանապարհորդք, որոնք կ'ուզէին ջերմ և կակուղ անկողին, և կամ մանուակոց, զուարթամիտ և միշտ կատակի պատրաստ ընկերներ գտնել, զորս ոչ միշտ և ոչ այլ շուտով կը գտնեն։ Վերջին հարցում մ'այլ այս պիտի լինի։ Թէ այն սովորական աշխարհագրութեան մէջ՝ զոր ամենքս զիտենք՝ ս'ը կը գտնուին տեղեաց այնպիսի անուններ, որք իրենց իմաստով նմանին ցիցբերու ծայրերը հաստատուած թրջութեկաց կամ տախտակներու, որոնց վերայ կ'ընթերցուին։ Այս տեղէն անցնելոյս հրաւան լկայ, և կամ, Այս ցանկասպատիս մէջ արգելուած է որսորդաշրջանն։

Ո՛րչափ շատախօսութիւն երկու անուանց համար։ Բայց խօսքս, սիրելի Բարեկամ, ուրիշ նոր փոսքեր կը ծնանին, և հարկ է որ զուք համբերութիւն ունենաք։ Ահաւսիկ բուն կէտը հօս է։ Պր. Ալադին կը հաստատէ, և քիչ կը մնայ որ ըսեմ թէ կ'երգնու, թէ այն երկու զիւղակիներն կը կոչուին, մին՝ Գոնևազ արևազ جونا جونا և միւսն՝ Գափոն արևազ جونا جونا այս ինքն է, մին՝ Հիար լընդուտի, և միւսն՝ Կոտաք չի բնակար. զորս եթէ ս'ը և է լեզուով

թարգմանենք և երկու անուններն այլ միա-  
ցրենք, յառաջ պիտի գայ մեզի քաղաք  
մի, առան մի կամ հիւզ, այսպիսի տար-  
օրինակ անուանակոչութեամբ. Անցորդ պա-  
րոններ, հաձեցէք առ կրողն երբայ \* : —  
Իսկ թէ պր. Ալազին գափի զբէ և ոչ գա-  
փոս, այդ զարմանք չի պատճառեր, զի եր-  
կու ձեն ալ զործածական է օսմանեան զա-  
ւտարարաւներու մէջ. զայլով շնչաբերուն,  
զոնագ և զափի, որք թաթարական չեն,  
զայնն անուանարորդին խզնին կը թողում,  
և թէպէտ ես իմ կերպովն այլ զրեմ, բայց  
չեմ համարձակիր զինքը սխալած համարիչ\*\* :  
Առ այժմ՝ ես այլ կը փակեմ սիրտս և զըռ-  
ներս. և քանի որ այս երկու անունք ու-  
րիշ անցազիր մի չունին՝ վաւերացուցիչ դրոշ-  
մով և ստորագրութեամբ, այնպէս կը կեղ-  
ծեմ՝ իբր թէ զանոնք բնաւ ընթերցած չեմ.  
սակայն կը յուսամ որ՝ երբ զիմակն վեր-  
ցուի՝ երկուքն այլ նոյնանան կամ ամփո-  
փուին իւարուի անուան մէջ, իբրև երկու  
կենդանի անձինք և մի քրիստոնէայ ա-  
նուս \*\*\* :

Ուրիշ տեղ Ալազին իւր ներկերու տաս-  
տակէն աւելի զեղեցիկ զոյննր կ'առնու. և  
երբ Ակնի կը մօտենայ՝ կը սիրահարուի այդ  
քաղաքին, և Առիոյ մէջ զայն զերազանցող  
ուրիշ բան չի տեսներ՝ եթէ Ամասիա չլի-  
ներ : Նորա նկարագրութիւններն աշխոյժ,  
զողար և սիրալիր են. բայց ես կ'սխորժիմ  
աւելի ներքին հոգին զիտեղ՝ քան լոկ ար-  
տաքին զգեստները. որովհետև Ալազին ըն-

տանեկան ինչ ինչ սովորութեանց վրայ տե-  
ղեկութիւններ կու տայ, զորս կարելի է թէ  
բնիկ հայ վկայներ կամ հաստատեն, կամ  
զեղեցիկացիներն նորանոր նմանութեամբ, և  
կամ բոլորովին ևս հերքեն : Արդ այս վկայ-  
ներէս միայն իսկ եռանդը շարժել ի պա-  
տասխանատուութիւն՝ ինձ համար մեծ հա-  
ճոյք և շահ պիտի լինի :

Հիմակ զառնանք ի Բալուս Պր. Ալա-  
զինին բաժին համեմատ, միայն Բալուսի և  
անոր շրջակայ անզեաց մէջ ամուսնացած  
կիներն, քանի որ իւր սկետուն ողջ է, իր  
երեսը քոչարկած կը պահէ՝ մինչև անգամ  
իւր ամուսնէն : Այս զէպքին մէջ՝ ո՛չ թէ առ-  
նացի կամ տիրական նախանձաւորութիւնն  
է՝ որ կը զինուի թշնամեաց և քարեկամաց  
որոզայթներուն դէմ, այլ ամենահին թագու-  
հայն նորա օրտին մէջ սածած փափայն է, ու-  
րով կ'ուզէ միայնակ թագաւորել տան մէջ.  
միով բանիւ կը տեսնենք յայտմ՝ վայրահակ  
հասակին նախանձը ընդդէմ՝ ստոյգ երիտա-  
սարգութեան, որ է բեւի՛ երկու սերերու  
իրարու հետ մարտումը. — Բայց մեր ճա-  
նապարհորդն կը պատմէ նա և, թէ աւելի  
անպիմ՝ զէպ ի Այրարատի կողմերը, կիներն  
իւր երեսը չի բանար՝ մինչև որ չի վճարէ  
իւր աշխարհի տուրքը. այս ինքն է, մինչև  
այն ժամանակ՝ որ կարող լինի իւր ամուսնոյն  
առջև պարծիլ իրեն անդրանիկ որդւով : Դար-  
ձեալ, եթէ ստոյգ է՝ ինչ որ կ'ընթեռնում  
բաւական հեղինակութիւն ունեցող զրքերու  
մէջ, թէ հայ կանայք ուրիշ աւելի ծանր  
պատժոյ մ'այլ զատապարտուած են Հայաս-  
տանի քանի մի տեղեր. այսինքն է՝ թէ կին  
մի հարսանեաց օրէն մինչև վեց տարի վերջը  
պէտք է լուս ու մուշ կենայ, միայն նը-  
շաններով զօ՛ր լինելով, և այն ժամանակ  
միայն պիտի կարենայ բերանը բանայ՝ երբ  
ինքն և իւր ամուսինն առանձին պտուին,  
առանց ականատես վկայ մ'ունենալու : Ար-  
դեօք ճիշդ այսպէս է : Եթէ յիբուի այսպէս  
է, կրնանք զուշակել՝ թէ նոքա իրենց բըւ-  
նաւորին առջև բաւերու ինչպիսի հեղեկներ  
կը թափեն :

Ուրիշ սովորութիւն մ'այլ կայ՝ նման Բա-  
լուսեաց մօտ եղածին : Քանի որ ընտանեաց

\* Signori che passate, abbiate la bontà di andare al diavolo !


\*\* Աւելի արտառայ անուն մի պիտի ունենայինք. եթէ ուզէինք կրկին թուրքերէն թարգմանել բառ առ բառ այս զերմաներէն տուրք. Wir machen die Thür nicht auf, համարելով արշալու (այժմադիւ) :

\*\*\* Յերուկ ժամանակաւ « Անհիւրընկէ » անուն մ'այլ եղած է, բայց ծով մ'էր և ոչ տուն. և նոյն իսկ այդ կէն « Δεσφοս անունն յետոյ եղաւ ΕΒΞΕΦΟΣ, և ետակ յոնիկական դուռտաքարբառով ΕΒΞΕΦΟΣ, յորմէ յառաջ եկաւ լատին և ապա իտալ սովորութիւնն կոչելու նոյն ժուրք Euxinus, Eussino. Թերևս ժամանակաւ Հայաստանի մէջ այլ նոյնք զատանի, և լինին յազայս Աֆեճիւլ (Prendi tutti) և Պոմոբոնի (Spalancaporte) տեսնենքով նորանոր տեղեր :

մէջ պապը ողջ է, ինքն է միակ հայրն. և զինքը հայր կը կոչէ՝ ոչ միայն իւր որդին, այլ և նորա որդին ևս. իսկ վերջինս իւր բուն հօրը պարզապէս եղբայր անունը կու տայ, որ թուրքերէն կ'ըսուի ախպար **ԲԱԺ**. Անա զողորմիկ և անուսահտ ծաղիկ մի ընտանեկան կենաց պարտիդին մէջ. մինչ զեռ բոլորովին խոյթող փուշ մ'է, ինչպէս կ'ընեն, պարզ մկրտութեան անուամբ կոչել մայրը, Աննա, Հռիփսիմէ, Իսկուհի, և այլն, այնպէս որ չի լսուին այն զգայուն բառերը. մայրիկ, մայրիկ չափ, և մինչև անգամ ոսկեմայրիկ (madre d'oro), ինչպէս կը գտնուին աշխարհիս վերայ մարդիկ՝ որք այսպէս կը կոչեն լի զորովով և պանծանօք:

Վերջապէս, եթէ ուզենք աստ զանազան մարդկանց բարբը ու սովորութիւնները իրեւրաց հետ բազդատել, թէ՛ մեծ և թէ՛ փոքր կրեբու մէջ, մենք ամենին ձանձրոյթ պիտի չի գզանք. ուստի, ամփոփելով մեր խօսքը, զարձընենք մեր աչքը արևմուտքէն դէպ ի արևելք, — միայն թէ պատճառաբանելու և հետևութեանց յանդելու համար վկայութիւնք պէտք է արժանահաւատ լինին, — և տեսնենք թէ արդեօք մեզի, որ թէ և հետաքրքրե՞ր՝ բայց զինքը սիրող ենք, ինչ պատասխան պիտի տայ արևելքը...

Ի Պաղատա, 1896. Եմիլ Տեզա



**ՈՒՂԵՆՈՒՄԻՒՄԻՒՆ Ի ՀԱՅՍՏ\***



ՀԱՅ ազգն աշխարհիս ամենահին ժողովուրդներէն մին է... որոյ խանձարուրքն է Ալլարատ կամ Մասիս լեռն, իւր գետն

\* Կերկայ զրութիւնս քաղուածոյ է Contemporary Review թերթի 1896 տարուայ նոյեմբերի համարին մէջ գտնուած Theodore Bentի Ուղեշարժիւնք է Հայս խորագրու մէկ յուշուածին:

է՛ Երասխ, իսկ լինն է՛ Ուրմիս<sup>1</sup>, իսկ նորա աշխարհն բաժնուած է երեք պետութեանց մէջ, Ռուսիոյ, Թուրքիոյ, և Պարսկաստանի:

Այս տեղ մամրամամ կը Յկարագրէ յօդուածագիրն յիշեալ երեք պետութեանց հպատակ հայրու միմտել և զրութիւն: Երկրիմ արևելեամ կողմը՝ հրէից մմամ ցուած են հայք, կ'ըսէ, և մոցապէս հնարագէտք՝ մարտար և խորամանկ են գործոց և առուտուրի մէջ, զոր արդիւնք կը համարի այմ միշտ ցրուելու և գաղթիլու հակամէտ քաղաքակամութեամ կամ զրութեամ, որ սկսեր է թուգանդակամ կայսրոց ժամանակէմ և կը շարու մակուծ միջն ցարդ: Այմ սակաւ և թոյլ զնմազրութիւնմ՝ զոր ի գործ զրեր է հայ ազգմ իւր ցըրմամ արդիւնք է, կ'ըսէ հեղմեակն, իրեն բազմապատիկ դաւամութեանց և զամոնք ստէպ փոփոխիլու զերութեամ՝ որք յայտնապէս կ'ընրկն մորա մէջ: Ինչպէս բմակամ է, կը յաւելու մա գամագամ դաւամմք և կրօնք առելութիւմ յառաջ կը բերնմ ժողողոցնամ մի մէջ և այնու պառակտումմ և ամմիաբամութիւմ յամմմայնի:

Հայոց ասանդութիւնք զարմանալիք են... և Բազմութի տեղական զրոյցներ ունին. օրինակ իմն, Տարսանի մէջ (ի կիլիկիա) շատ կը խօսուի Ս. Պաւղոս առաքելոյն մասին: Նոյն տեղոյ եկեղեցին կառուցուած է առաքելոյն հիմնած հին շէնքի մի վերայ, և զերեզմաննոցին մէջ կը տեսնուի տակաւին ծառ մի, որ՝ ըստ ասանդութեան՝ նոյն առաքելոյն տակեր է: Այնոր շուրջ կը զըստուին հայոց շիրմներն, որոք զարդարուած են իւրաքանչիւր հանգուցելոյն արուեստը ցուցընող խորհրդական առարկաներով. վաճառականին շիրմին վերայ կը տեսնուին կշիռք և չափք, իսկ զարբնոյն՝ ուռն և սալ, և այլն: Կր ցուցընեն զարձեալ Ս. Պաւղոսի տունը և ջրհորը, ուր հաւատացեալք ուխտի կ'երթան: Սիս, որ կամօղիկոսանիստ քաղաք է, նըշանաւոր իւր հնութեամբն և պատմական յիշատակներով, որ ծաղկեցաւ երբեմն իսլայկրաց ժամանակները, ներկայապէս ողորմելի ասանի մի երեւոյթն ունի՝ միջնաբերդին ներքև շինուած, ուր 550 տարի յառաջ կը բարձրանայր արբունի սպարանքն և Այնոր

1. Լաւագոյն էր բսել վիանայ ծովն. կ'երևի թէ յօդուածագիրն վաճայ կողմերը չէ պտըտած, այն պատճառաւ ևս չէ յիշած զայն: